ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՌՍԹՈՌ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 39 ՀԱՍՑԵՈՒՄ «ՆՈՐՔ» ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ

2024 թվականի հունիսի 11-ին Արմավիր համայնքի ղեկավար Վարշամ Սարգսյանն Արմավիրի համայնքապետարանի նիստերի դահլիճում անցկացրեց հանրային լսում՝ «ԱՌՍԹՈՌ» ՍՊԸ-ի կողմից Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Բաղրամյան փողոց 39 հասցեում «Նորք» բնակելի թաղամասի կառուցման գործունեության վերաբերյալ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ հանրային լսման նպատակն է բնակչությանը ներկայացնել ծրագրի նախագիծը, ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն: Իր խոսքում նշանակալից համարեց նման մեծ ծրագրի իրականացումը Արմավիրում, կարևորեց բնակելի նոր թաղամասի կառուցման դրական ազդեցությունը համայնքի զարգացման գործում՝ հատկապես, որ ծրագրի ղեկավարների կողմից հաստատվեց թաղամասում նոր մանկապարտեզի կառուցման գաղափարը: Ներդրումային ծրագրի ճարտարապետները ներկայացրեցին նախագծային լուծումները, վաճառքի պայմանները, ՇՄԱԳ-ի փորձագետն էլ իր հերթին հավելեց շրջակա միջավայրի վրա փոշու կամ վառելիքի այրման ազդեցության լոկալ և կարճաժամկետ լինելը:

Հանրային լսման մասնակիցների կողմից հնչեցին հարցեր գնային քաղաքականության, կոմունալ մատակարար կազմակերպությունների, հարակից սեփական տների բնակիչների իրավունքների սահմանափակման վերաբերյալ: Հարցերին ի պատասխան՝ ծրագրի ղեկավարների կողմից նշվեց, որ օրենքով սահմանված բոլոր քաղաքաշինական նորմերը պահպանված են, գնային քաղաքականությունն արդեն որոշված է և փորձելու են հետագայում գնի բարձրացում չկիրառել, ինչպես նաև նորմերին համապատասխան ապահովվելու են կոմունալ բոլոր հարմարությունները՝ առանց վնաս հասցնելու քաղաքի բնակչությանը:

Կառուցողական հարց ու պատասխանից հետո համայնքի ղեկավարն ամփոփեց հանրային լսումը և խոստացավ հետևողականորեն աջակցել նմանօրինակ նախագծերի իրականացմանն Արմավիրում:

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

Արձանագրող՝ ԹԱՄԱՐԱ ՇԱՌՈՅԱՆ

11.06.2024թ.